



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեխնոլոգիաների և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵԼԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Մայիսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեխնոլոգիաների և մոնիթորինգի կենտրոնի ագրոտեխնոլոգիաների և մոնիթորինգի կենտրոնի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հանրապետության շրջանների զգալի մասում օդի միջին ջերմաստիճանը առաջին փասնօրյակում եղել է նորմալի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են ապրիլի 5-6-ին. Տավուշում գրանցվել է +23...+25°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +17...+19°C, նախալեռնային շրջաններում՝ +25...+27°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +25...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +19...+22°C, Շիրակում՝ +16...+20°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +17...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24°C, Գեղարքունիքում՝ +15...+20°C, Լոռիում՝ +20...+23°C, Արմավիրում՝ +26...+27°C, Արարատում՝ +26...+28°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +16...+18°C, նախալեռներում՝ +19...+24°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 3-4-ին. Տավուշում՝ +4...+6°C (Դիլիջան՝ 0°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +5...+8°C, նախալեռնային շրջաններում՝ -1...+3°C Շիրակում՝ 0...-4°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 0...-3°C, նախալեռնային շրջաններում՝ +2...+4°C, Գեղարքունիքում՝ 0...-4°C, Լոռիում՝ -3...+2°C, Արմավիրում՝ +4...+6°C, Արարատում՝ +4...+7°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -2...-4°C, նախալեռներում՝ +2...+4°C:

Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 7-26մմ (26-33%), Լոռիում՝ 32-50մմ (106-151%), Տավուշում՝ 16-27մմ (51-89%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 16-25մմ (47-89%), նախալեռներում՝ 1-2մմ (25-29%), Գեղարքունիքում՝ 10-19մմ (58-72%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 11-13մմ (28-31%), նախալեռներում՝ 1մմ (5%), Արմավիրում՝ 1-2մմ (6-11%), Արարատում՝ 2-4մմ (13-18%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 9մմ (24%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 22մմ (119%), նախալեռներում՝ 23-54մմ (100-139%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը












Մայիսի առաջին տասնօրյակում լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում հողի մակերևույթին դիտվել են բացասական ջրեմաստիճաններ: Նվազագույն ջրեմաստիճանները գրանցվել են 5-ին լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում հասնելով $-1...-5^{\circ}\text{C}$ (Աշոցքում՝ -6°C), Արարատյան դաշտում, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում՝ $+1...+3^{\circ}\text{C}$, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ $+4...+6^{\circ}\text{C}$ աստիճան:

Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների



Ըստ արբանյակային տվյալների մայիսի առաջին տասնօրյակում հանրապետությունում մշակաբույսերի աճն ու զարգացումն ընթացել է բազմամյա միջին ժամկետներում: Շրջանների մեծ մասում վեգետացիոն ցուցիչը հասել է առավելագույն արժեքի, ինչը պատկերված է վառ կանաչ գույնով, բացառությամբ Արարատյան դաշտի և որոշ լեռնային շրջանների, որտեղ այդ արժեքն առավել ցածր է եղել: Քարտեզի վրա կապույտով պատկերված տարածքն ամպամածության շերտն է, որի հետևանքով վեգետացիոն ցուցիչի արժեքը հնարավոր չէ որոշել:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները



Տասնօրյակի ընթացքում հովտային շրջաններում շարունակվել է ջերմասեր մշակաբույսերի սածիլման աշխատանքները, ձմերուկի ցանքը, լեռնային և նախալեռնային շրջաններում՝ կարկոֆիլի, կաղամբի և ճակնդեղի փնկումը, եգիպտացորենի ցանքը:

Աշնանացան ցորեն

Արարատյան դաշտում բազմամյա միջին ժամկետներից 12-15 օր շուտ աշնանացան ցորենը ծաղկել է, իսկ մնացած հովտային շրջաններում այն գտնվել է հասկակալման փուլում:

Արարատում զարգացած հասկիկների թիվը հասկում 17 հապ է, թերզարգացածինը՝ 5 հապ, ցողունների թիվը 1մ²-ի 230 հապ է, իսկ հասկով ցողունների քանակը՝ 204 հապ:

Բույսերի աճի ու զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի արդյունավետ խոնավության պաշարները Մերձավանում աշնանացանի դաշտում 0-10սմ շերտում կազմել է 21մմ, 0-20սմ շերտում՝ 46մմ, 0-30սմ շերտում՝ 76մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել էր 3-10մմ-ով:

Նախալեռնային և առանձին լեռնային շրջաններում առաջացել է աշնանացան ցորենի ծեղացողունի ներքին հանգույցները:

Հովտային և նախալեռնային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 47-60սմ, լեռնային շրջաններում՝ 22-28սմ, տասնօրյակային աճը կազմել է 8-10սմ:

Լեռնային շրջաններում գարնանացան գարին և գարնանացան ցորենը ծելել են, Գյումրիում առաջացել է երրորդ տերևը, Սիսանում գարին թփակալել է:

Նախալեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ եգիպտացորենը ծելել է:





Պղղապտուներ, խաղող

Լեռնային շրջաններում առաջացել են հնդավորների ծաղկաբույլերը, փեղ-փեղ՝ ծաղկել են, նախալեռնային շրջաններում սկսվել, հովտային շրջաններում շարունակվել է կորիզավորների պտղի ձևավորումը:

Հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է խաղողի վազի ծաղկաբույլերի առաջացումը:

Արմավիրում զարգացած ճյուղերի քանակը 38 հատ է, իսկ ծաղկաբույլերով ճյուղերի քանակը 30 հատ, Մերձավանում՝ համապատասխանաբար 40 և 29 հատ:

Խաղողի դրույթյան գնահատականը լավ է:

Բանջարային մշակաբույսեր, կարտոֆիլ

Հովտային շրջաններում առաջացել են բանջարանոցային մշակաբույսերի, նախալեռնային շրջաններում՝ կարտոֆիլի կողային ընձյուղները:



Խոտաբույսեր

Լեռնային շրջաններում փեղի է ունենում կորնգանի ցողունի աճ:

Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ծաղկաբույլերի առաջացումը: Կորնգանի բարձրությունը փասնօրյակի վերջին կազմել է 16-20սմ, առվույտինը՝ 55սմ, փասնօրյակային աճը կազմել է 6-8սմ: